ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 21/4

ՀՀ, ք. Երևան 20 հունիսի 2024 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 17-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 17-րդ ենթակետերով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. հրատարակության երաշխավորել ԵՊՀ գրահրատարակչական խորհրդում քննարկված աշխատությունները՝ ըստ Հավելվածում ներկայացված ցանկի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024 թ. հունիսի 20-ի թիվ 21/4 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ, ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ

Հայ բանասիրության ֆակուլտետ

1.	Արդի արևելահայերենի քերականական ուսումնական բառարան, **կազմող՝** **Յուրի Ավետիսյան**, **Արտաշես Սարգսյան**, **Լուիզա Մելքոնյան**, **Լիլիթ Ծատուրյան**	Բառարանում ներկայացված է մոտ 4000 բառի ձևաբանական ամբողջական նկարագրություն: Բառարանային նյութը ընտրված է ժամանակակից արևելահայերենի գործածական և հիմնականում ձևակազմության մեջ որոշակի դժվարություններ ներկայացնող բառերից: Բառարանը նախատեսված է բանասերների, ուսուցիչների, ուսանողների, բարձր դասարանների աշակերտների, առհասարակ մտավոր աշխատանքով զբաղվողների և հասարակության լայն խավերի համար:	Չափսը՝ B5, 389 էջ Տպաքանակը՝ 100 Կազմը՝ N7

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ

2.	**Սեյրան Զաքարյան** Սուրբ Գրիգոր Տաթևացու	Գրքում վերլուծվում ու գնահատվում են միջնադարյան հայ փիլիսոփայության ու աստվածաբանության խոշորագույն ներկայացուցիչ, Տաթևի համալսարանի ուսուցչապետ, «վարդապետն ամենայն հայոց»,	Չափսը՝ A 4, 479 էջ Տպաքանակը՝ 100 Կազմը՝ N 3

	փիլիսոփայությունը. մենագրություն	սուրբ Գրիգոր Տաթևացու (1346-1409) աստվածաբանական, բնազանցական-գոյաբանական, բնափիլիսոփայական, մարդաբանական, հոգեբանական, իմացաբանական-տրամաբանական, հասարակագիտական, քաղաքագիտական, բարոյագիտական ու գեղագիտական հայացքները: Նախատեսված է հայ տեսական մտքի և փիլիսոփայության ու աստվածաբանության պատմությամբ հետաքրքրվողների համար:	

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ

3.	**Տաթևիկ Կիրակոսյան** Հուզարտահայտչականությունը համացանցային հաղորդակցության մեջ. մենագրություն	Մենագրության նպատակը հուզարտահայտչական միավորների կիրառման հնարավորությունների և առանձնահատկությունների ուսումնասիրությունն է համացանցային հաղորդակցության ընթացքում: Մենագրության մեջ իրականացվում է հուզական մտածողության խոսքային և ոչ խոսքային արտահայտչաձևերի համալիր քննություն համացանցային հաղորդակցության մեջ: Ուսումնասիրված են այնպիսի երևույթներ, որոնց շնորհիվ ձևավորվում է հաղորդակցական ներուժը, այդ թվում՝ հուզականության կարգի դրսևորման առանձնահատկությունների քննությունը համացանցային հաղորդակցության մեջ: Մենագրությունը նախատեսված է մասնագիտական լայն շրջանակի համար, որոնք հետաքրքրվում են լեզվի ու ճանաչողության փոխկապակցվածության, խոսքաստեղծման և խոսքային ներգործման հարցերով: Մենագրությունը կարող է կիրառվել նաև մագիստրոսական ուսուցման կիրառական	Չափսը՝ A4, 141 էջ Տպաքանակը՝ 100 Կազմը՝ N 3

		լեզվաբանության և հոգելեզվաբանության դասընթացներում:	
4.	Հայերի ցեղասպանությունը. անցյալի և ներկայի ներհայեցումներ. ծրագիր և համառոտագրեր **կազմող՝ Սեդա Գասպարյան**	Ժողովածուն ամփոփում է Երևանի պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, Կալիֆորնիայի նահանգային համալսարանի Նորթրիջի հայկական ուսմանց ծրագրի (ԱՄՆ) և Լեփսիուսհաուս Պոտսդամի (Գերմանիա) համատեղ կազմակերպվող «Հայերի ցեղասպանությունը. անցյալի և ներկայի ներհայեցումներ» ընդհանուր խորագիրը կրող միջազգային գիտաժողովի ծրագիրն ու զեկուցումների համառոտագրերը: Միջազգային գիտաժողովը նվիրված է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի 90-ամյակին: Զեկուցողների ուշադրության կենտրոնում են վեպի պատմաքաղաքական ու գրական նշանակությունը, Ֆրանց Վերֆելի հայանպաստ գործունեությունը, ինչպես նաև պատմության տարբեր շրջափուլերում հայերի հանդեպ հետևողականորեն իրականացված թուրք-ադրբեջանական ցեղասպան քաղաքականությունն ու դրա դրսևորումները: Ժողովածուն ընդգրկում է նաև գիտաժողովի մասնակիցների մասին որոշակի տեղեկություններ, ինչը գիտական նոր կապերի հաստատման ու ընդլայնման հնարավորություն է ընձեռում:	Չափսը՝ A5, 157էջ Տպաքանակը՝ 100 Կազմը՝ N 3
		Ֆարմացիայի ինստիտուտ	
5.	**Ալբերտ Սահակյան** Դեղագործական գործունեության կառավարումը.	Սույն ուսումնական ձեռնարկը «Դեղագործական գործունեության կազմակերպումը և կարգավորումը» աշխատանքի երկրորդ մասն է, որում համակարգված կերպով առաջին անգամ ներկայացված են	Չափսը՝ A4, 241 էջ Տպաքանակը՝ 150 Կազմը՝ N 3

	դեղագործական գործունեության կազմակերպումը և կարգավորումը, մաս II. ուսումնական ձեռնարկ	հանրապետության բնակչության ու բժշկական հաստատությունների դեղային ապահովման կազմակերպման և կարգավորման հիմնական խնդիրները: Ձեռնարկը նախատեսված է դեղագործական ինստիտուտների, ֆակուլտետների ու քոլեջների ուսանողների համար և կարող է օգտակար լինել նաև ասպիրանտների, դեղագործական ուսումնական հաստատությունների դասավանդողների, ինչպես նաև գործնական առողջապահության և դեղագործության կազմակերպման ոլորտի մասնագետների ու ղեկավարների համար:	
		Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ	
6.	Karlen Khachatryan, Anna Hakobjanyan, Kristine Nikoghosyan Bridging Academia and Industry: Unraveling University-Industry Collaborations in the EU and Transitioning Economies, կոլ. մենագրություն	«*Կամրջելով բուհը և բիզնեսը. Բացահայտելով բուհ-կազմակերպություն համագործակցությունը ԵՄ-ում և անցումային տնտեսություններում (Իտալիայի և Հայաստանի օրինակով)*» հետազոտությունն ուսումնասիրում է բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացման ներուժը և առաջարկում է վերջինիս հաջող իրականացման համապարփակ շրջանակ: Ուսումնասիրություններն անցկացվել են Հայաստանում և Իտալիայում՝ կենտրոնանալով Վենետիկի Կա’Ֆոսկարի համալսարանի և Երևանի պետական համալսարանի փորձի վրա: Մեթոդաբանորեն հետազոտությունը ուսումնասիրում է բուհ-կազմակերպություն համագործակցությունը երեք տեսանկյունից՝ համալսարան, բիզնես և ուսանողներ: Ներկայացվում են ԵՄ-ի և անցումային տնտեսությունների միջև առկա հնարավոր նմանությունները բուհ-կազմակերպություն	Չափսը՝ A4, 153 էջ Տպաքանակը՝ 100 Կազմը՝ N 7

		համագործակցության շրջանակում, և առաջարկվում է ազգային մակարդակում կառուցվածքային, գործառական և իրավական փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ: Այն նպատակ ունի ուղղորդելու քաղաքականություն մշակողներին բուհ-կազմակերպություն արդյունավետ համագործակցության հաստատման գործում:	
		Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ	
7.	**Ռենա Վարդանյան, Սեյրան Սուվարյան** Գովազդը և PR-ը սերվիսում. ուսումնամեթոդական ուղեցույց	Ուսումնամեթոդական ուղեցույցում ներկայացված են «Գովազդը և PR-ը սերվիսում» դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը, դասընթացի շրջանակում կիրառվող մեթոդաբանությունն ու գործնական պարապմունքների կազմակերպման մոտեցումները՝ առաջադրանքների համապատասխան օրինակներով: Ուսումնամեթոդական ուղեցույցը կարող է օգտակար լինել «Գովազդը և PR-ը սերվիսում» դասընթացի դասավանդմամբ զբաղվող դասախոսների համար՝ դասընթացի ծրագրի կազմման ու գործնական պարապմունքներ կազմակերպման նպատակով, ինչպես նաև դասընթացն ուսումնասիրող ուսանողների համար:	Չափսը՝ A5, 88 էջ Տպաքանակը՝ 100 Կազմը՝ N 3
		Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	
8.	**Թեհմինե Մարտոյան** Ցեղասպանության քաղաքականությա	Գրքում ներկայացված են Զմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման, նրանց թաղամասերի հրկիզման պատմական իրողությունները: Քեմալական վարչակարգը, հայերի դեմ գործադրված ցեղասպան քաղաքականության շարունակման ծրագիրը որդեգրելով, քաղաքական ու կրոնական	Չափսը՝ A4, 141էջ Տպաքանակը՝ 100 Կազմը՝ N 3

ն շարունակությունը Զմյուռնիայում (1922)	անհանդուրժողականության ծայրահեղ միջոցներ է կիրառել Զմյուռնիայում 1922 թ. սեպտեմբերին: Զմյուռնիայի հայերի ու հույների բնաջնջումը ցեղասպանության քաղաքականության շարունակության համատեքստում ներկայացնելը կարևորվում է Հայոց և Հունաց ցեղասպանությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից. գիրքը շարադրվել է միջազգային կոնվենցիաների, մարդու իրավունքների վերաբերյալ հռչակագրերի, հանցավոր պետության ընդունած հրամանների, այդ ժամանակահատվածում Զմյուռնիայում հավատարմագրված դիվանագետների հավաստի և արժեքավոր վկայությունների, ականատեսների օրագրային գրառումների վերլուծության հիման վրա: Նախատեսված է ցեղասպանագետների, արևելագետների, պատմաբանների և ընթերցող լայն հանրության համար: